

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/2

22 մայիսի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի 03.05.2012թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410433 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 26.03.2012թ-ին կազմվել է թիվ 1410433 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

«ՀՀ Ոստիկանությունից ստացված նյութերի հիման վրա ներկայացվել է միջնորդություն և ստացվել որոշում, որի հիման վրա այցելեցինք ք.Երևան, Պ.Սևակի փողոցի թիվ 125 միջնակարգ դպրոցի դիմաց ավտոկայանատեղի կազմակերպած Սերյոժա Հովհաննիսյանին ՕՀՄ 6 իրականացնելու համար: Իրերի և փաստաթղթերի հետազոտության իրականացման ժամանակ Սերյոժա Հովհաննիսյանի կողմից փաստաթղթեր չներկայացվեցին, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունը կազմակերպվել էր առանց համապատասխան գրանցման: ՀՀ Ոստիկանությունում Սերյոժա Հովհաննիսյանի կողմից տրված հայտարարության հիման վրա առաջադրվում է տուգանք՝ 438000 դրամի չափով:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համախառն եկամտի 50%-ի չափով, սակայն ոչ պակաս 200.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14-րդ բաժնի պետը 26.03.2012թ-ին ընդունել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410433 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ տուգանք 438.000 դրամ:

Քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի գանգատում մասնավորապես նշված է.

2012թ. մարտի 30-ին փոստով ստացել եմ ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության թիվ 1410433 արձանագրությունը և վարչական ակտը, համաձայն որի ինձ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության համար՝ ՀՀ ոստիկանությունում իմ կողմից տրված հայտարարության հիման վրա առաջադրվել է տուգանք 438.000 դրամ:

Գտնում եմ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից կազմված արձանագրությունը և վարչական ակտն ակնհայտ ապօրինի և անհիմն են:

Հայտնում եմ, որ Երևան քաղաքի թիվ 125 դպրոցի հարակից տարածքում թվով 5 ավտոմեքենաներից, գիշերը կայանելու համար, ամեն մեկից 200 դրամ հաշվարկից ելնելով, ընդամենը 2011թ. օգոստոս ամսին ստացել եմ 30.000 դրամ:

«ՀՀ ոստիկանությունում, իբր իմ կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեության համար տրվել է հայտարարություն, որը հիմք է հանդիսացել առաջադրված տուգանքի համար, ակնհայտ սխալմունք է և ճիշտ չէ, քանի որ այն ձեռք է բերվել ոստիկանի բացահայտ ճնշման, խաբելու արդյունքում, կազմվել է ոստիկանի կողմից: Իրականում ավտոմեքենաների կայանման համար ընդամենը ունեցել եմ 30000 դրամի եկամուտ:

Միաժամանակ ինձ երկու անգամ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները հրավիրել են Նոր Նորքի հարկային տեսչություն, սակայն ինձնից ապօրինի ձեռնարկատիրական գործունեության և ստացված եկամուտների վերաբերյալ որևէ հայտարարություն չեն վերցրել:

Վերը նշվածի վերաբերյալ սույն թվականի ապրիլի 4 ին դիմել եմ Նոր Նորքի հարկային տեսչության պետին, սակայն մինչ օրս որևէ պատասխան չեմ ստացել:

Ես 78 տարեկան եմ, ունեմ բազմաթիվ հիվանդություններ, մասնավորապես թոքերի ծանր հիվանդություն:

Վերոգրյալից ելնելով խնդրում եմ դիմում քննարկել, ինչպես նաև անվավեր համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ-հետախուզության վարչության թիվ 1410433 վարչական ակտը:

«ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.01.2012թ. թիվ 22-Ա հրամանով հաստատվել է «Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման ընթացակարգը» (այսուհետ Ընթացակարգ):

Ընթացակարգի 9-րդ կետի համաձայն. «ՕՀՄ արդյունքում ապօրինի գործունեության իրականացման փաստ հայտնաբերվելու և հիմնավորվելու դեպքում ՕՀՎ աշխատակցի (աշխատակիցների) կողմից կազմվում է սույն հրամանի N5 հավելվածով հաստատված ձևով արձանագրություն (երկու օրինակից): Արձանագրությունում պարտադիր հղում է կատարվում խախտմանն ու դրա արձանագրմանն առնչվող համապատասխան փաստաթղթերի, արձանագրությունների, հայտարարությունների, բացատրությունների, հավելվածների վրա, որոնք կցվում են արձանագրությանը և հանդիսանում նրա բաղկացուցիչ մասը: Արձանագրության նկարագրական մասում պարտադիր նշվում են՝

3) գործունեության իրականացման ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը), ...

8) հղումներ իրավական ակտերի այն նորմերին, որոնք խախտվել են,

9) հղումներ իրավական ակտերի այն նորմերին, որոնք սահմանում են պատասխանատվություն և հարկային պարտավորություն»:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2012թ-ի թիվ 1410433 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ուսումնասիրմամբ պարզվեց, որ այն կազմվել է Ընթացակարգի 9-րդ կետով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես.

- Արձանագրությունում նշված չէ, թե քանի օրինակից է այն կազմված,

- նշված չէ, ապօրինի գործունեության իրականացման ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը),

- չեն կատարվել հղումներ իրավական ակտերի այն նորմերին, որոնք խախտվել են,

- չեն նշվել պատասխանատվություն և հարկային պարտավորություն սահմանող բոլոր իրավական ակտերի նորմերը:

Ընթացակարգի 11-րդ կետի համաձայն. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը՝ ՕՀՎ պետը, ՕՀՎ պետի հանձնարարությամբ պետի տեղակալը կամ ՕՀՎ բաժնի պետը (այսուհետ՝ պաշտոնատար անձ) վարչական վարույթի հարուցմանը (սույն ընթացակարգով նախատեսված արձանագրության կազմմանը) հաջորդող երեք օրվա ընթացքում սույն հրամանի N6 հավելվածով հաստատված օրինակելի ձևով պատշաճ ծանուցում է (կցելով արձանագրությունը) վարչական ակտի հասցեատիրոջը և իրավախախտման փաստի արձանագրմանն առնչվող անձանց (փոխադրող, վարորդ, առաքիչ և այլ) լսումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին»:

Քննարկվող դեպքում Արձանագրությունը կազմվել է 26.03.2012թ-ին, սակայն Ընթացակարգի 11-րդ կետով սահմանված ծանուցագրով վարույթի իրականացման համար անհրաժեշտ լսումների իրականացման օր է նշանակվել 23.03.2012թ-ը, այն դեպքում, երբ Ընթացակարգի 11-րդ կետի համաձայն, նշված լսումները պետք է տեղի ունենային Արձանագրությունը կազմվելուց հետո ընկած ժամանակահատվածում (արձանագրության կազմմանը հաջորդող երեք օրվա ընթացքում):

Քննարկման ընթացքում նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Այսինքն, գործունեությունը որպես ձեռնարկատիրական որակելու համար պարտադիր պայման է հանդիսանում շահույթ ստանալու նպատակի առկայությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է հիմնավորվեր քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի կողմից շահույթ ստանալու նպատակով հիշատակված գործունեությամբ զբաղվելու փաստը: Այսինքն, քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է պարզվեր և ապացուցվեր, որ Սերյոժա Հովհաննիսյանը գործունեությունն իրականացրել է շահույթ ստանալու նպատակով:

Ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանությունը տվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված

պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն << վճռաբեկ դատարանի որոշմամբ նշված բոլոր հանգամանքները:

Քննարկվող դեպքում չի պարզվել և բացահայտվել, թե քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի գործունեության մեջ առկա են արդյոք վերը թվարկված հանգամանքները, թե ոչ:

<< քաղաքացիական օրենսգրքի և << վճռաբեկ դատարանի նշված որոշման իմաստով ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակներից է հանդիսանում շահույթ ստանալու նպատակը: Այսինքն, արդյոք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, թե ոչ: Նշված հանգամանքը քննարկվող դեպքում չի պարզվել: Ինչից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Սերյոժա Հովհաննիսյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական որակելու համար:


<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Արկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 26.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատանխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410433 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ 

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ